

տեսի Յակոբի դուստր Սառային որ փոխեցաւ ի ՌՄԿԲ (1813) փետրուար 13»:

Թիւ 53. — «Այս է տապան հանգստեան յարեւելցի Գաւիզի կողակից Սիմային որ փոխեցաւ ի կեանս թժին ՌՄԶԹ (1840) նոյեմբ.»

Ա Յ Տ Օ Ս

Թիւ 1. — «Այս է տապան հանգստեան կարբեցի Միրզախանի որդի Մկրտչին որ փոխեցաւ ի կեանս ՌճՀԹ (1730)»:

Թիւ 2. — «Այս է տապան հանգստեան կարբեցի Ալեսանոսի որդի Աղապապի որ փոխեցաւ ի կենաց ՌճՂԹ (1750)»:

Թիւ 3. — «Այս է տապան հանգստեան Մելիքաւեցի Գալուստի որդի կարապետի որ փոխեցաւ ի կեանս» (անթուական):

Թիւ 4. — «Այս է տապան հանգստեան կարբեցի Աղաբաբի որդի Գրիգորին որ փոխեցաւ ՌճՂԲԻ (1744)»:

Թիւ 5. — «Այս է տապան հանգստեան կարբեցի Տաթևու Բաբի որդի Ղազարին ՌճԾԳ (1704)»:

Թիւ 6. — «Այս է տապան հանգստեան Զարդազարմին..... ՌճԾԻ (1701)»:

Թիւ 7. — «Այս է տապան հանգստեան Յովհաննէս որդի..... ՌճԾԳ (1704)»:

Պ Ո Ի Բ Կ Ա Զ

Եկեղեցւոյն դրան առջև գտնուող մարմարին քարերէն՝ այժմ գրեթէ մաշած.

Թիւ 1 «Այս է տապան հանգստի, ի նահանգէն Երվանցի, Եւ ի գիւղէն էր Քարծեցի, Վաճառական էր զովելի, Որդի էր սա Վարդանէսի, Գրիգոր անուն էր զովելի: Որ փոխեցաւ ի կեանս աստի ՌՄԼԳ թուականի և մայիսի (1784)»:

Թիւ 2. — «Այս է տապան հանգստեան Երզուրումցի էր գիւղէն Ներսիսիանցի ապաճի Յակոբի որդի խանթարճի պարոն Պողոսի որ փոխեցաւ առ Աստուած արդ աղաչեմ զձեզ ասացէք Աստուած ողորմի սէնէ ՌՄԿԲ (1813) ապրիլի ժ.՝»:

Թիւ 3. — «Աստ նընչէ հաճի Մարտիկի փեսայ տէր Գէորգեան որուն որդին վաճառական Մովսէս աղան, աստ վայելչագող, բարեկոյս տընկոյ Մովսէս խղճալի տոհմին իւր յարգոյ, գանձարան շնորհաց, բուրվառ Աստուծոյ մինչ քսան և ութ հասակաւ գեղոյ հարաւ խորշակաւ ժանտախտին ցաւոյ, Աստուած բարերար ապաւնէ

իմ, դու մոյժ սա ի յերկին ցնծալի տեսլամբ քոյ. յամի տեառն 1814 յունիս 6»:

Թիւ 4. — Անմեկնելի տապանագիր մը «ՌՄԼԳ (1784) մարտ ամսի Բ.» թուականով:

Ս Օ Ֆ Ի Ա

Թիւ 1. — «Այս է տապան շոռթեցի ծառուրի...էտին որ փոխեցաւ քրիստոսի...»

«Այս է տապան շոռթեցի Ավետիկի որդի մահտեսի Պետրոսին որ փոխեցաւ առ Աստուած թժին ՌճԼ (1681) նուեմբերին»:

Թիւ 2. — «Այս է տապան Շոռթեցի Հայրապետի որդի մահտեսի Յովհաննէսի որ փոխեցաւ առ Քրիստոս ՌճԾԲ (1709) յնար Է.ին»:

Թիւ 3. — «Այս է տապան Շոռթեցի Սուքիասի որդի Բալի որ փոխեցաւ առ Քրիստոս թժին ՌճՀին (1721) մայիսի ժ.՝»:

Թիւ 4. — «Այս է տապան հանգստեան Շուռթեցի Խաժրումեց, Ալետիսի որդի Ալէքսանի որ փոխեցաւ թժին ՌՄԵ (1756) դեկտեմբեր Ա.ին»

Թիւ 5 «Նայեցարուք ծնունդք երկրի, ի սա տապանըս որ տեսանի, Եղեալ կայ աստ ի պահեստի, Մարմին առն բարեպաշտի, Սա էր յերկրէն Նախշականցի, Եւ ի գեղջէն Շուռթեցի, Տօլօնց Ալետիքի որդի, Երատուրին որ փոխեցաւ առթժին ՌճՀԹ (1730) սեպտեմբեր ժ.թ.»:

Թիւ 6. — «..... Մալաթեացի թերզի պաշի պարոն Կոնոնոսի կողակից Մարիամ խաթունի որ փոխեցաւ ի կեանս թժին ՌՄԿ (1811ին) ապրիլի թ.ին»:

Թիւ 7. — «Այս է տապան հանգստեան Բազարճոցի պարոն ...կողակից հանգուցեալ Ումային որ փոխեցաւ ի կեանս ՌՄԿԲին (1813) փետրվարին ժ.»:

Թիւ 8. — «Այս է տապան հանգստեան հանգուցեալ Կանանիոսի որդի հանգուցեալ Օյանեսի որ փոխեցաւ աստեն ի կեանս թժին Հայոց ՌՄԿԳին (1814) և յուլիսի ժ.ին»:

Թիւ 9. — Աղբիւրի քարին տակ անմեկնելի, «ՌՄԿԵ (1816) դեկտեմբեր Ի.ին» թուականով:

Թիւ 10. — «Այս է տապան հանգստեան Յոհաննէսի որդի հանգուցեալ Զաքարին որ փոխեցաւ աստեն ի կեանս թժին ՌՄԿԲ մայիսի ժ.թ. (1819)»:

Թիւ 11. — «Այս է տապան հանգստեան Տիարապէթիբցի Աստուածատուրի որդի հեզահոգի պարոն Օհանին որ փոխեցաւ ի կեանս թժին ՌՄՀԲ (1829) յունվարի ժ.ին»: